

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 28 –ի նիստի /արձ.6/

1. Հաստատել և գործողության մեջ դնել ԵԹԿՊԻ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը:

2. ԵԹԿՊԻ-ի առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգի 5-րդ և 4.11-րդ կետերում կատարել ներքոհիշյալ լրացումները՝

- 5-րդ կետում ավելացնել 5.7 ենթակետը հետևյալ բովանդակությամբ.  
«Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ավարտական կիսամյակում վերականգնվող ուսանողները (համապատասխանաբար 210 և 90 կրեդիտ կուտակած), վերջնարդյունքների համընկման դեպքում, ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերություններ չեն հանձնում: Վերականգնվող ուսանողի գնահատման նշագրումն ավարտական կիսամյակում իրականացվում է ուսումնառության նախորդ փուլի գնահատման սանդղակին համապատասխան (տառային գնահատականով և դրա թվային համարժեքով կամ այլ)»:
- 4.11-րդ կետում ավելացնել երկրորդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ.  
«Միջանկյալ կամ եզրափակիչ ստուգումներին անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում, եթե տվյալ դասընթացի (ուսումնական մոդուլի), առարկայի արդյունարար գնահատականը դրական է, ապա ուսանողը կարող է մասնակցել տվյալ կիսամյակի լուծարքային շրջանին՝ հանձնելով բաց թողնված ստուգումը»:

2.1 ԵԹԿՊԻ-ի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգի 5-րդ և 4.13-րդ կետերում կատարել ներքոհիշյալ լրացումները՝

- 5-րդ կետում ավելացնել 5.6 ենթակետը հետևյալ բովանդակությամբ.  
«Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ավարտական կիսամյակում վերականգնվող ուսանողները (համապատասխանաբար 210 և 90 կրեդիտ կուտակած),

վերջնարդյուքների համընկման դեպքում, ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերություններ չեն հանձնում: Վերականգնվող ուսանողի գնահատման նշագրումն ավարտական կիսամյակում իրականացվում է ուսումնառության նախորդ փուլի գնահատման սանդղակին համապատասխան (տառային գնահատականով և դրա թվային համարժեքով կամ այլ):»:

- 4.13-րդ կետում ավելացնել երկրորդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ. «Միջանկյալ կամ եզրափակիչ ստուգումներին անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում, եթե տվյալ դասընթացի (ուսումնական մոդուլի), առարկայի արդյունաբար գնահատականը դրական է, ապա ուսանողը կարող է մասնակցել տվյալ կիսամյակի լուծարքային շրջանին՝ հանձնելով բաց թողնված ստուգումը»:

3. Հաստատել Թատրոնի ֆակուլտետի կանոնադրությունում ֆակուլտետի խորհրդի կողմից առաջարկված մասնակի փոփոխությունը և սույն կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Թատրոնի ֆակուլտետը ԵԹԿՊԻ-ի ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն մի քանի մասնագիտություններով, համակարգում է ամբիոնների գիտահետազոտական, ստեղծագործական և ուսումնամեթոդական աշխատանքները:

ա) 2016-2017 ուս. տարիներին ընդունելությունից սկսած՝ բակալավրի կրթական ծրագրով՝ Թատերական արվեստ և Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտությամբ:

բ) 2015-2016 և նախորդ ուսումնական տարիներին ընդունվածների համար՝ Դերասանական արվեստ, Ռեժիսուրա և Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտությամբ»,

3.1 ուժը կորցրած ճանաչել սույն կանոնադրության 8.3 և 11 կետերը:

4. Հաստատել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի կանոնադրությունում ֆակուլտետի խորհրդի կողմից առաջարկված մասնակի փոփոխությունը և սույն կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ֆակուլտետը ԵԹԿՊԻ-ի ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն, առկա ուսուցման ձևով բակալավրի կրթական ծրագրով.

ա) 2016-2017 ու. տարվա ընդունելությունից սկսած՝ բակալավրի ծրագրով երեք ՄԿԾ-ներով՝ 021103.00.6 Կինոարվեստ, 021101.00.6 Տեսալսողական արվեստ, 021301.00.6 կերպարվեստ:

բ) 2015-2016 և նախորդ ուսումնական տարիների ընդունվածների համար բակալավրի կրթական ծրագրով՝ 071300 Կինոարվեստ, 071400 Օպերատորություն, 071900 Գեղանկարչություն մասնագիտություններով»,

4.1 ուժը կորցրած ճանաչել սույն կանոնադրության 8.3 և 11 կետերը:

5. Հաստատել ինստիտուտի Գիտական խորհրդին կից ներքոհիշյալ համաինստիտուտային մշտական հանձնաժողովների կազմը՝

5.1 Մանդատային հանձնաժողով

Նախագահ – Դավիթ Մուրադյան

անդամներ – Նարինե Սարգսյան

Հովհաննես Ավագյան

Վահան Եղիազարյան

Էլմիանա Հեքեքյան

Աննա Երզինկյան

Արմեն Հարությունյան

Արմինե Եղիազարյան

Վերա Մարգարյան

Հենրիետա Նալբանդյան

Էլեն Մանասերյան

Հասմիկ Իսրայելյան

Հարություն Հարությունյան

## 5.2 Մեթոդաբանություն

Նախագահ – Նարինե Սարգսյան

անդամներ – Աննա Երզնկյան

Էլմիաննա Հեքեքյան

Արմեն Հարությունյան

Արմինե Եղիազարյան

Գոհար Հովհաննիսյան

Վերա Մարգարյան

Էլեն Մանասերյան

## 5.3 Մրցութային հանձնաժողով

Նախագահ – Նարինե Սարգսյան

անդամներ – Լատրա Մուրադյան

Էլմիաննա Հեքեքյան

Արմեն Հարությունյան

Գոհար Հովհաննիսյան

## 5.4 Որակի ապահովման և վերահսկման հանձնաժողով

Նախագահ – Դավիթ Մուրադյան

անդամներ – Անուշ Ասլիբեկյան

Աստղիկ Պետրոսյան

Արմեն Սարգսյան

Արմինե Ավետիսյան

Գարեգին Գրիգորյան

Գրիգոր Խաչատրյան

Թամար Հակոբյան

Լարիսա Ստեփանյան

Լիլիան Հովակիմյան

Ծովինար Ասատրյան

Կարապետ Շահբազյան

Կարեն Գրիգորյան

Հարություն Ազարյան

Նարինե Գրիգորյան

Ռուբեն Կարապետյան

Սուսաննա Կյուրեղյան

Վասիլ Գևորգյան

Վարուժան Ավանեսյան

Տաթև Ղազարյան

Քնարիկ Թորոսյան

Քրիստինե Պողոսյան

Աստղիկ Խաչատրյան (ուսանող)

Էլեն Նահապետյան (ուսանող)

Լուսինե Մուրադյան (ուսանող)

Մերի Մկրտչյան (ուսանող)

6. Արձանագրել, որ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

6.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

6.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 6-րդ կետի գ) ենթակետի համաձայն դոցենտ Դավիթ Յուրիի Մինասյանին ձայների մեծամասնությամբ (33 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ) շնորհել պրոֆեսորի գիտական կոչում ԺԷ.00.03. «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

7. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին ռեկտորատի առաջիկա նիստում զեկուցել ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

8. Ինստիտուտի 2017թ. ընդունելությունը գովազդելու և դիմորդների անհրաժեշտ թվաքանակ ապահովելու նպատակով հանձնարարել հանրային կապերի և տեղեկատվության պատասխանատու Էրիկ Բարսեղյանին՝ ծավալել ակտիվ քարոզչական գործունեություն:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան